ՄԵԹՈԴԻԿԱ

Գայանե ԴԱՆԻԵԼՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԱՌՑԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Առցանց հաղորդակցությունը, գտնվելով դեռևս զարգացման փուլում, առանձնանում է հստակ սահմանված հաղորդակցական ուրույն մեթոդաբանությամբ, որում գերակայում է համագործակցային բաղադրիչը: Առցանց դիսկուրսի սահմանումների միջգիտակարգային ուսումնասիրությունը վկայում է, որ համացանցային հաղորդակցական միջավայրում գերիշխում է խոսակցական լեզվի ոճը: Լեզվական միավորների կիրառության այս պատկերն առավել ակնառու է մասնավորապես էլեկտրոնային զրույցներում և նամակներում, ինչը դրսևորվում է համաժամանակյա և տարաժամանակյա առցանց դիսկուրսում խոսակցական լեզվի տարրերի գերակայությամբ, բարդ ստորադասական և համադասական կառույցների բացակայությամբ:

Բանալի բառեր. *մեդիակրթություն, առցանց հաղորդակցություն, խոսույթ, միաժամանակյա/տարաժամանակյա, հաղորդակցում, մեդիատեխնոլոգիաներ*

Վերջին տասնամյակում զգալի աճել է հետազոտողների հետաքրքրությունը առանց հաղորդակցության նկատմամբ, և ի հայտ են եկել այս գործընթացի հետ առընչվող բազմաթիվ նոր տեսական և գործնական մոտեցումներ: Առցանց հաղորդակցությանը բնորոշ մանկավարժահոգեբանական և մեթոդական առանձնահատկությունների ուսումնասիրությունները մեդիակրթության ոլորտում ուղղվում են առավելապես միջանձնյա հաղորդակցության դաշտ, ներառելով նաև որոշակի տեխնոլոգիական գործընթացներ (Procedure) /Nass, Steuer, 1993: 504-527/:

Մեդիամանկավարժները հաղորդակցությունն այլևս չեն դիտարկում իբրև մեկ անձից մյուսին տեղեկատվություն փոխանցելու գործընթաց, քանի որ այսօրվա մեդիատեխնոլոգիաները հաղորդակցության այլ մոդել են պարտադրում, նվազեցնելով համագործակցային բաղադրիչը: Փորձը ցույց է տալիս, որ առցանց արդյունավետ հաղոր-

դակցվելու համար հաղորդակցվողները պետք է ունենան լեզվական ընդհանրություն, հենքային գիտելիք, փոխադարձաբար ըմբռնեն միմյանց ակնկալիքները և հետևեն սահմանված այն կանոններին, որոնք նպաստում են առցանց հաղորդակցության արդյունավետությանը:

Ըստ Ռ. Յակոբսոնի, արդյունավետ հաղորդակցության նախապայման է հանդիսանում լեզվական կոդային ընդհանուր համակարգի առկայությունը: Բուն հաղորդակցության մեջ նա նշում է վեց բաղադրիչ՝

- տեղեկատվություն,
- տեղեկատվություն փոխանցող,
- տեղեկատվության հասցեատեր,
- հարատեքստ,
- լեզվական կոդ,
- շփում:

Ռ. Յակոբսոնի այս մոդելը լիարժեք չի արտացոլում մեդիակրթական հարատեքստի ազդեցության դրսևորումներն առցանց հաղորդակցության ընթացքում այն առումով, որ չի բացահայտում տեղեկատվության իրացման եղանակները /Jakobson,1963: 213-214/:

Մեդիակրթություն իրականացնող ժամանակակից լեզվաբաններն առցանց հաղորդակցության գործընթացը դիտարկելով լեզվաբանական գիտակարգերի տեսանկյունից, կարևորում են հարատեքստը, համարելով այն լեզվական բաղադրիչների համակարգ: Հակադրվելով այս մոտեցմանը Մ. Բախտինը գտնում է, որ լեզուն իմաստավորվում է ոչ այնքան լեզվական կաղապարների վերացական համակարգից, այլ լեզվական հաղորդակցության այն իրավիճակից, որտեղ հաղորդակցությունն իրականացվում է մի քանի տարբեր խոսքային ակտերի շնորհիվ /Volosinov, 1976: 172/:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մեդիակրթական գործընթացներում առցանց հաղորդակցության լեզուն ոչ թե զուտ հաղորդակցման միջոց է, այլ կարևոր մշակութային հարթակ, որտեղ իրականացվում է հաղորդակցական ակտ: Սակայն չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր հաղորդակցություն կրում է հասարակական բնույթ, հետևաբար առցանց հաղորդակցական ակտը պայմանավորված է նրանցից յուրաքանչյուրին բնորոշ ազգային, մշակութային, քաղաքական և հասարակական ինքնության առանձնահատկություններով /Rimé,1984: 415-446/:

Առցանց հաղորդակցությունը լուսաբանող մեդիակրթական կաղապարներով է հատկապես շեշտվում հարատեքստի դերը՝ կարևորելով մեդիա միջավայրը, որտեղ անմիջապես տեղի է ունենում հաղորդակցությունը տարածական ու ժամանակային հարատեքստային ցուցիչների իրագործմամբ: Մեդիակրթական կաղապարները հնարավորություն են ընձեռում նկարագրելու հաղորդակցության լեզվական և մանկավարժա-

հոգեբանական առանձնահատկությունները, որոնք բնորոշում են մեդիա միջավայրի բնույթը:

Ց. Գալիմբերտի լեզվաբանական տեսություններում հատկապես կարևորվում է խոսակցական կաղապարների քննությունը, երբ հաղորդակցությունը դիտվում է որպես փոխազդող, հարաշարժ գործընթաց: Հեղինակը փորձում է այլ կերպ սահմանել «հաղորդակցություն» և «հաղորդակցվող» հասկացությունները, առաջինը համարելով մարդկային ճանաչողության տարատեսակ, իսկ երկրորդը՝ միջոց /Galimberti, 1994: 113-152/:

Մենք կարծում ենք, որ մեդիակրթության ոլորտում առցանց հաղորդակցության արդյունավետությունը պայմանավորված է հաղորդակցվող սուբյեկտների կողմից նշանային որոշակի համակարգերի և հաղորդակցական սկզբունքների գործիմաց կիրառմամբ: Անդրադառնալով առցանց հաղորդակցության մեթոդաբանությանը դիտարկենք այն համաժամանակյա և տարաժամանակյա համապատկերում: Հայտնի է, որ առցանց համաժամանակյա հաղորդակցության կարևորագույն նախապայմանը խոսակիցների առցանց տիրույթում միաժամանակ գտնվելն է, իսկ ահա տարաժամանակյա հաղորդակցության ամենատարածված տարատեսակներից են, օրինակ, տեքստային և ձայնային հաղորդագրությունները, տեսաուղերձները և ձայնային նամակները:

Ի տարբերություն տարաժամանակյա հաղորդակցության՝ համաժամանակյա հաղորդակցության կարևորագույն յուրահատկությունն այն է, որ վերջինս տեղի է ունենում իրական ժամանակային ձևաչափում, որտեղ մեդիասպառողները հնարավորություն ունեն հաղորդակցվելու մեկ կամ մի քանի խոսակիցների հետ: Համաժամանակյա հաղորդակցության տարատեսակների շարքում շահեկանորեն առանձնանում է առցանց զրույցը, երբ միմյանց հետ կարող են հաղորդակցվել բազմաթիվ մեդիասպառողներ: Տարաժամանակյա առցանց հաղորդակցությունը զուրկ է այս յուրահատկությունից, որով էլ առանձնանում է հաղորդակցության մնացած բոլոր տարատեսակներից:

Այս առումով հատկանշական է Ջ. Նյուհեյգնի կարծիքը, ըստ որի համաժամանակյա հաղորդակցության համար էական է բազմամիջավայրային ընդլայնման (multimediality), գերտեքստայնության, փաթեթների փոխանջատման և փոխգործունության հնարավորությունները /Newhagen, 1996: 4-13/:

Ու թեև համացանցային հաղորդակցության միջավայրում առկա են որոշակի յուրահատկություններ, որոնք բնորոշ են առերես հաղորդակցությանը, խոսակիցների համագործակցության ձգտումը, որը միտված է հաղորդակցությունն առավել արդյունավետ դարձնելու, հաղորդակցական սույն տարատեսակում սահմանափակ է, ինչը պայմանավորված է տեխնոլոգիական միջոցների յուրահատկությամբ:

Հայտնի է, որ ըստ հաղորդակցության դինամիկայի՝ էլեկտրոնային նամակները կարող են բնութագրվել տարաժամանակյա հաղորդակցության հատկանիշներով կամ դրսևորվել համաժամանակյա հաղորդակցության յուրահատկություններով: Մեդիակրթության ոլորտում՝ առաջին դեպքում էլեկտրոնային նամակներում գերակայում են գրավոր խոսքին բնորոշ ձևեր, երկրորդ դեպքում հատկանշական են բանավոր խոսքի յուրահատկությունները:

Անցյալ դարի 80-ականներից սկսած, էլեկտրոնային նամակները մուտք գործեցին առցանց հաղորդակցության ոլորտ պաշտոնական նամակների ձևաչափով: Հետզհետե էական փոփոխություններ արձանագրվեցին էլեկտրոնային նամակների ոճաժանրային յուրահատկություններում, ինչի արդյունքում խոսքի գրական լեզվին հատուկ ձևերին փոխարինեցին խոսակցական ձևերը, որոշակիորեն կրճատելով հաղորդակցությանը տրամադրվող ժամանակը: Օրինակ՝

Sara, Just wanted to drop you a line and check and see if this is a good e-mail address. I haven't sent you any corny jokes in a while.

Love,

your older adopted brother Charles.

Այս օրինակում զեղչված է ենթական, որը պետք է արտահայտված լիներ առաջին դեմքի անձնական դերանվան եզակի թվով: Հաջորդ ասույթը երկիմաստ է, քանի որ կամ զեղչված է նախադասության ենթական, և կամ այն հրամայական եղանակով է, ուստի կարող է մեկնաբանվել նաև որպես տվյալ հաղորդակցությունն ամփոփող հրաժեշտի խոսք: Այս ամենը ակնհայտորեն տրամադրում է նամակն ընկալելու որպես բանավոր խոսքի բնույթով հագեցած էլեկտրոնային հաղորդակցություն:

Subject: 9th B-day Invite

Hope you folks can make it.

AM

Ակնառու է, որ օրինակում բացակայում է ողջույնի խոսքը և, որ այն հրավեր է: Կողմնորոշվում ենք միայն հաղորդակցության թեմայով: Ոճը ամբողջովին խոսակցական է. հեղինակը կիրառել է B-day հապավումը և invite գոյականը, որը invitation լեզվական միավորի խոսակցական տարբերակն է: Հաղորդագրության մեջ զեղչված է նախադասության ենթական, որը պիտի արտահայտվեր առաջին դեմքի անձնական դերանվամբ: Folks միավորի խոսակցական տարբերակն այստեղ արտահայտում է **ընկերներ** իմաստը: Բանավոր խոսքի ոճի առկայության վկայություն է նաև **make** լիիմաստ բայի խոսակցական ձևը **հաջողել,** կարողանալ ժամանել իմաստով: Բացակայում են նաև հրաժեշտ արտահայտող լեզվական տարրեր:

Ներկայացնենք էլեկտրոնային նամակի այլ օրինակներ՝

- Hi David

Could you send me those staff guidelines asap? Our dep hasn`t seen them yet. Thx.

- Hi Johannes!

I`m coming over to Bern for a conference in 2 weeks & was wondering if you could sort out somewhere for me to stay? I`ve got a bit of info about the conference hotel, it`s the Hotel Bern in Viktoriastrasse 43, but not sure I want to stay there!

Can you help me pls?

Hope this is OK with you!

Teresa

Վերոնշյալ օրինակներում հեղինակի կողմից օգտագործվել են բայի կրճատ ձևեր (hasn`t seen, I`m coming, it`s, I`ve got), asap (as soon as possible), dep (department), Thx (thanks), info (information), pls (please) հապավումները, որոնք բնորոշ են բանավոր խոսքին և սովորական են դարձել էլեկտրոնային հաղորդագրությունների համար /Chapman, 2012: 8, 16/:

Վերոբերյալ օրինակներից ելնելով կարող ենք փաստել, որ մեդիակրթության ոլորտում էլեկտրոնային հաղորդակցությունը առանձին կիբերժանր չի համարվում քանի որ, առավել հաճախ, էլեկտրոնային հաղորդակցություն իրականացնելիս նախընտրությունը տրվում է բանավոր խոսքին բնորոշ ոճային լուծումներին, որոնք էլ առավելապես հատկանշական են վիրտուալ զրույցներին, մասնավորապես՝ չատերին /Yates, Ornikowski, 1998: 299-326/:

Անդրադառնալով առցանց հաղորդակցությանը՝ ամերիկացի սոցիոլոգներ Լ.Սփրուլը և Ս.Քիսլերը նշում են, որ առցանց հաղորդակցությունն իրականանում է հասարակական վակուումում, որտեղ անհատների ինքնությունը խամրում ու աստիճանաբար անհետանում է /Sproull, Kiesler, 1986: 157-187/:

Մեդիակրթության ոլորտում կատարված հետազոտությունների արդյունքում մշակվել է առցանց հաղորդակցությունը մեկնաբանող նոր մոտեցում, որն անվանվել է իրադրային գործելակերպի տեսություն (Situated Action Theory): Ըստ Լ. Սաքմանի՝ սույն տեսությունն ուսումնասիրում է, թե ինչպես են անհատները, հաշվի առնելով տվյալ իրավիճակը, համապատասխան գործունեություն ծավալում: Այս տեսության մեջ մեդիակրթական հարատեքստը անփոփոխ չէ, հետևաբար մեդիասպառողները առցանց հաղորդակցական իրադրությունները ընկալում են ըստ դրանց բնորոշ մշակութային առանձնահատկությունների /Suchman, 1987: 17-32/:

Ջ. Մանտովանին մեդիասպառողներին լայն առումով չի համարում զուտ տեխնոլոգիական միջոցներ կիրառողներ: Նրանք իրականում ազգային և հասարակական ինքնություն ունեցող անհատներ են: Ներկա-

յացնելով մեդիակրթական հարատեքստի բնույթը՝ Ջ. Մանտովանին առաջադրում է երեք մակարդակից բաղկացած կաղապար՝ առաջինում գտնվում է մեդիակրթական հարատեքստի ընդհանուր գաղափարը, երկրորդում՝ առօրյա կյանքի կենցաղային իրավիճակները, իսկ երրորդում՝ տեղայնացված փոխազդեցությունը, որն իրականանում է համակարգչի միջոցով /Mantovani, 1996: 170-172/:

Այսպիսով՝ մեդիակրթական հարատեքստը կարելի որակել որպես մարդկային միջամտության շնորհիվ անընդհատ փոփոխվող տվյալ մշակույթին բնորոշ նշանային համակարգ: Այն չի կարող սահմանվել միայն միջանձնյա փոխհարաբերությունների տեսանկյունից կամ տվյալ լեզվական միջավայրի առանձնահատկությունների հիման վրա: Մեդիակրթական հարատեքստը հաղորդակցությունն ուղղորդող նախադրյալներից է, հաղորդակցվողներին երկուստեք ծանոթ նշանային հերթագայություն, որտեղ խոսքային գործողության իմաստ է ստեղծվում /Mantovani, 1996: 237-269/:

Համաձայն մեկ այլ տեսության, որի հիմքում ընկած են Մ. Բախտինի և Լ. Վիգոտսկու դրույթները, անհատի սոցիալական դերը հստակ որոշարկված կարգ է, մինչդեռ անհատին բնորոշ դիրքորոշումները՝ դինամիկ փոփոխվող իրողություններ են, որոնք արտահայտվում են հաղորդակցության ընթացքում /Harré, 1989: 165-188/: Ռ. Առեն այս մոտեցումը տարանջատում է երկու տարբեր գործընթացներով՝

- դիսկուրսի ծավալման ժամանակ ի հայտ եկող դիրքորոշումները,
- հասարակական իրադարձությունների դիսկուրսիվ վերարտադրությունը /Harré, van Langenhove, 1991: 393-407/:

Մեդիակրթաության ոլորտում առցանց հաղորդակցության մեթոդաբանությունը սահմանող վերոնշյալ երկու մոտեցումներն ունեն մեկ էական տարբերություն: Այսպես՝ դիրքորոշային դրույթը (positioning) հաղորդակցությունը համարում է մարդկային գործունեության ամենակարևոր դրսևորումներից, որի ընթացքում ի հայտ են գալիս որոշակի մտավոր կաղապարներ (brainframes):

Փորձելով սահմանել առցանց հաղորդակցությունը ինքնադիսկուրսի և դրա դրսևորման միջև առկա կապով՝ կարելի է եզրակացնել, որ առցանց հաղորդակցությունը խոսընթացի վիրտուալ տարատեսակ է: Սակայն՝ մի կողմից խոսընթացը սկսողը փորձում է տեղեկատվություն փոխանցել զրուցակցին, սակայն վերջինս չի կարող վստահ լինել, որ դիմացինը ստացել է իրեն ուղղված տեղեկատվությունը, մյուս կողմից տեղեկատվության հասցեատերը չի կարող վստահ լինել, որ զրուցակցի ինքնությունը քողարկված չէ: Հետևաբար վիրտուալ իրականությունը հաղորդակցության միջավայր է, որտեղ զրուցակիցների ֆիզիկական ներ-

կայությունը տեսանելի է, սակայն վերջիններիս իրական ինքնությունը կարող է թաքնված լինել կեղծ օգտատերերի ինքնության դիմակով:

Այսպիսով, առցանց հաղորդակցության մեթոդաբանությունը մեդիակրթության ոլորտում շարժընթաց զարգանում է՝ փոխելով լեզվի և դրա կիրառության վերաբերյալ կարծրացած մոտեցումները: Առցանց հաղորդակցության մեջ լեզվական միավորները դիտվել են մշտապես իբրև սլենգային դրսևորումներ և լեզվի ենթաշերտեր: Այժմ, մեդիակրթական ակտիվ գործընթացների իրականացման արդյունքում, առցանց հաղորդակցության լայնատարած կիրառումը կյանքի բոլոր ոլորտներում հանգեցրեց նոր լեզվի ի հայտ գալուն, և դիսկուրսը իր արժանի տեղը զբաղեցրեց լեզվաբանական ուսումնասիրությունների շրջանակներում՝ մասնավորապես առցանց լեզվաբանության մեջ, ինչն էլ թելադրում է համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցման յուրահատուկ և բազմաժանր մոդելներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Chapman R. English for Emails (Express Series). Oxford: Oxford University Press, 2012.
2. Galimberti C. Dalla comunicazione alla conversazione // *Ricerche di Psicologia,* 18 (1), 1994.
3. Harré R., van Langenhove L. Varieties of positioning // *Journal for the Theory of Social Behaviour,* v. 21, Blackwell Publishing, 1991.
4. Harré R. Language and Science of Psychology // *Journal for the Theory of Social Behaviour and Personality,* v. 4, 1989.
5. Jakobson R. Essais de linguistique générale. Paris: Minuit, 1963.
6. Mantovani G. New Communication Environments: From Everyday to Virtual. London: Taylor & Francis, 1996.
7. Mantovani G. Social context in HCI: A new framework for mental models, cooperation and communication // *Cognitive Science,* v. 20, 1996.
8. Nass C., Steuer J. Voices, Boxes, and Sources of Messages, Computers and Social Actors // *Human Communication Research,* v. 19 (4), 1993.
9. Newhagen J. E. Why Communication Researchers Should Study the Internet // *A Dialogue. Journal of Communication,* v. 46 (1), 1996.
10. Rimé B. Langage et communication (Language and communication) // Moscovici S. (ed.) *Psychologie sociale.* Paris: PUF, 1984.
11. Sproull L., Kiesler S. Reducing Social Context Cues: Electronic Mail in Organizational Communication // *Organizational Behavior and Human Decision Processes,* v. 37, 1986.

12. Suchman L. Plans and Situated Action. Cambridge: Cambridge University Press, 1987.
13. Volosinov V.N. Marxismo e filosofia del linguaggio. Bari: Dedalo, 1976.
14. Yates S. J., Ornikowski W. J. Genres of organizational communication: A structurational approach to studying communication and media // *Academy of Management Review*, 17 (2), 1998.

Г. ДАНИЕЛЯН – *Методология онлайн коммуникации в области медиаобразования.* – Онлайн коммуникация, находящаяся все еще в стадии разработки, отличается четко определенной уникальной методологией коммуникации, в которой преобладает компонент сотрудничества. Междисциплинарное исследование определений онлайн дискурса показывает, что разговорный стиль общения преобладает в среде Интернет-общения. Такая картина использования языковых единиц, особенно очевидна в разговорах по электронной почте и письмах, что проявляется в преобладании разговорных элементов в синхронном и асинхронном дискурсе, в отсутствии сложноподчиненных и сложносочиненных структур.

Ключевые слова: медиаобразование, онлайн общение, речь, синхронное/ асинхронное, общение, медиатехнология

G. DANIELYAN – *Online Communication Methodology in the Field of Media Education.* – Online communication, being still in the development stage, is distinguished by a unique communication methodology, in which the collaborative component prevails. An interdisciplinary study of online discourse definitions shows that the informal language predominates in the online communication environment. The predominance of spoken language elements is especially evident in text messages and e-mail conversations and is manifested in the synchronous / asynchronous discourse, as well as in the absence of compound subordinate and coordinate structures.

Key words: media education, online communication, speech, synchronous/ asynchronous, communication, media technologies

Ներկայացվել է՝ 26.10.2021
Երաշխավորվել է ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 11.11.2021